ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶԱՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Աշխարհագրություն

Ուսուցչի դերը Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Մարիամ Հովհաննիսյան Միշայի

Թիվ 23 միջնակարգ դպրոց,ուսուցիչ, աշխարհագրություն

Ղեկավար՝ Վոլոդյա Գրիգորյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3

2 Նախաբան 5

3. Ուսուցչի դերը Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում: 6

3.1 Ինքնուրույն ու նախաձեռնող սովորողի և ուսուցչի համագործակցությունը դպրոցում 9

3 . 2 Հարգանք անսովոր գաղափարների նկատմամբ; երեխաներին ավելի շատ անկախություն տալը 12

4.Նախագծային մեթոդ 13

Եզրակացություն 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

1. Ներածություն

Աշխարհը վերազինվում է նորագույն տեխնոլոգիաներով և ներկայիս տեխնիկապես հագեցված «տեղեկատվական գրոհի» ժամանակաշրջանում մեծ խնդիր է սովորողների համար հետաքրքրություն ներկայացնող ստեղծագործական մեթոդի ընտրությունը. այն պետք է լինի նորույթ, հաճելի և գրավիչ ու խթանի նրանց հետաքրքրությունը:

Մասնագետներին անհրաժեշտ են գտնել նոր գաղափարներ, խնդրի անսովոր լուծումներ, արագ արձագանքել միջավայրի փոփոխություններին, մշակել յուրօրինակ ռազմավարություններ: Արդի ժամանակաշրջանը ու նրա կառավարումը պահանջում է ուրույն մտածող, ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված հավակնոտ մասնագետներ, քանի որ արդեն իսկ բավարար չեն միակ ճիշտ լուծում ունեցող խնդիրները, անհրաժեշտ են այլընտրանքներ, այլընտրանքային լուծումներ: Եվ մերօրյա ստեղծարար անձը պահանջված է հասարակության զարգացման բոլոր փուլերում: ՈՒստի ինչպես գտնում է Ս. Մասլոուն, պետք է մշակվի ուսուցման նոր տիպ՝ ուղղված նոր, գործունյա, ստեղծարար, ինքն իրեն վստահող, ազատ մարդու ստեղծմանը: [1]

Աշխատանքի նպատակն է աշխարհագրության առարկայի դասավանդման միջոցով խթանել աշակերտների երևակայական ներուժը, զարգացնել ստեղծարարական մտածողությունը և պատրաստել արդի ժամանակներին համապատասխան աշխարհայացքով օժտված մրցունակ մասնագետներ՝ բոլոր մասնագիտությունների գծով:

Դրան հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ փոխկապակցված խնդիրները.՝

- հիմնավորվել է աշխարհագրության դասընթացը, որպես սովորողների ստեղծարարական ունակությունների զարգացման բաղադրիչ,
- փորձարկվել և խթանվել է սովորողների երևակայական ներուժը, որպես ստեղծարարական ունակությունների զարգացման գլխավոր գործոն,
- բացահայտվել են ստեղծարարական գործոնների և մանկավարժական կոմպենտենցիաների միջև առկա կապերը:

2 Նախաբան

Ժամանակակից աշխարհում, դպրոցում՝ դասապրոցեսի ընթացքում սովորողներին զուտ առարկայական գիտելիքներ փոխանցելը բավարար չէ հասարակության լիարժեք ինքնուրույն և նախաձեռնող անհատ ձևավորելու համար: Մեզ արդեն հայտնի, է որ երեխայի որպես անհատականություն ձևավորելու գործընթացը տեղի է ունենում դպրոցի, ընտանիքի և հասարակության շնորհիվ: Իր առանձնահատուկ դերը և նշանակությունը ունի դպրոցը երեխայի մտավոր և բարոյական արժեքների ձևավորման գործընթացում: Սկսած կրտսեր դպրոցական տարիներից ուսուցչի ստեղծագործական մոտեցումը դասաժամի ընթացքում դասապրոցեսը աշակերտի համար դարձնում է ավելի հետաքրքիր, իսկ տվյալ դասի թեման ընկալվում է շատ ավելի հեշտ և արագ քան միայն բանավոր ներկայացման միջոցով: Հենց նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում է դրվում անհատականության ձևավորման հիմքը, ինչը իր շարունակությունն է գտնում միջին և ավագ դպրոցական տարիքում: Եվ յուրաքանչյուր առարկայի ուսուցումը պետք է համապատասխանի ժամանակակից սովորողի պահանջներին: Այլապես այդ առարկան աշակերտների համար կընկալվի որպես բարդ և անհետաքրքիր: Աշակերտը պետք է մոտիվացիա ունենա դպրոց հաճախելու, գիտելիքներ ստանալու և նոր կարողություններ ձեռք բերելու համար: Սակայն ուսուցիչը հենց ինքը պետք է լինի մոտիվացված, ստեղծագործ, նորարար, որպեսզի օրինակ ծառայի աշակերտների համար: Դպրոցը չպետք է կաղապարի և ճնշի աշակերտի ինքնուրույնությունը և անհատականությունը այլ հակառակը պետք է օգնի սովորողի ինքնաճանաչմանը և անհատականության կայացմանը: Դպրոցը պետք է ձևավորի ուժեղ, ինքնավստահ, գիտելիքներով և կարողություններով զինված անհատ: Չէ որ այսօրվա աշակերտական նստարանին նստած երեխան ապագայի քաղաքացին է: Մենք ինքներս էլ կարող ենք բերել շատ օրինակներ, երբ շատ խելացի և գերազանց գնահատականներով դպրոցը ավարտած աշակերտը չի կարողանում կայանալ իր մասնագիտության մեջ և որպես

անհատ հասարակության մեջ: Այսպիսի դեպքերում կրթական գործընթացը կարելի է համարել ձախողված: Կրթությունը գիտելիք, կարողություն, հմտություն, ստեղծագործական ունակություն, նախաձեռնողականություն, պատասխանատվություն օղակներից բաղկացած շղթա է և եթե այդ օղակներից մեկը բացակայում է՝ շղթան դադարում է գոյություն ունենալ:
Ժամանակակից կրթության ռազմավարություններից է հնարավորություն տալ սովորողի ցույց տալ իր տաղանդները ու ստեղծագործելու ողջ ներուժը:
Կրթության հիմնական նպատակը երիտասարդ սերնդին ապագային նախապատրաստելն է: Ստեղծագործությունն այն ուղին է, որը կարող է արդյունավետ կերպով իրականացնել այս նպատակը: Ստեղծագործ անձի կրթության ինտեգրված մոտեցումը ներառում է ընդհանուր գեղագիտական և բարոյական դաստիարակության խնդիրներին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Գաղափարական, աշխարհայացքային, հոգևոր և գեղարվեստական անքակտելի միասնությունը էական պայման է աճող անձի, դրա զարգացման բազմակողմանի և ներդաշնակության համար: Ստեղծագործության արժեքը, նրա գործառույթները կայանում են ոչ միայն արտադրական կողմում, այլև ստեղծագործության հենց գործընթացում: Ժամանակակից հասարակությունը կարիք ունի ստեղծագործ անհատների, քանի որ նրանք ունեն հարմարվողականության և սոցիալականացման ավելի բարձր մակարդակ, ավելի մեծ չափով համապատասխանում են անընդհատ փոփոխվող և նորացվող աշխարհին: Այս առումով արդարացված է այն ուշադրությունը, որ մանկավարժական գիտությունը տալիս է երեխայի ստեղծագործական ներուժի զարգացման խնդրին:
Դպրոցական կրթություն բովանդակությունը ներկայումս ընդգրկում է ոչ միայն գիտելիքներով կարողություններ այլ նաև ստեղծագործական գործունեության փորձ և հուզարժեքային վերաբերմունք շրջակա աշխարհի նկատմամբ: Այս ամենի կրողն ու ձևավորողը անշուշտ ուսուցիչն է: բազմաթիվ հոգեբանական խնդիրներ կենտրոնանում են ուսուցչի շուրջ: նրա վերաբերմունքը դեպի աշակերտը երեխայի հոգու վրա ունեցած ներգործությունը մի կողմի իր սեփական աճն ու զարգացումը գոյություն ունենալ:
Ստեղծագործելու ունակությունը կարելի է բնութագրել որպես գործունեություն որի արդյունքում ստեղծվում է մի նոր բան որը բնութագրում է նոր ու անսպասելի կողմից և ն թույլ է տալիս յուրացնել նոր գիտելիքներ և կիրառել ավելի վաղ ձեռք բերվածը:

3. Ուսուցչի դերը Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում:

Իսկ հիմա դիտարկենք աշխարհագրություն առարկայի դերը սովորողների մեջ ստեղծագործականության, ինքնուրույնության և նախաձեռնողականության ձևավորման գործընթացում: Աշխարհագրություն առարկայի կարևոր առանձնահատկություններից է այն հանգամանքը, որ այն կապ է հաստատում մարդու և բնության, ինչպես նաև բնագիտական և հասարակական առարկաների միջև: Աշխարհագրություն առարկայի շնորհիվ աշակերտները ոչ միայն գիտելիքներ է ձեռք բերում բնություն վերաբերյալ, այլ նաև վերաբերմունք և արժեհամակարգ:

Բազմաթիվ հոգեբանական խնդիրներ կենտրոնանում են ուսուցչի շուրջ: նրա վերաբերմունքը դեպի աշակերտը երեխայի հոգու վրա ունեցած ներգործությունը մի կողմի իր սեփական աճն ու զարգացումը ստեղծում են հոգեբանական մի բարդ համակարգ, որի բաղադրամասերը ձևավորում են ուսուցչի կերպարը:

Այդ բաղադրիչներն են՝

1.մանկավարժական ուղղվածություն;

2.մանկավարժական իրազեկություն;

3. Հուզական ճկունություն:

Մանկավարժական ուղղվածությունը հուզարժեքային համակարգ է, որը ձևավորում է ուսուցչի անձի զարգացման շարժառիթները և մղում նրան կայանալու մանկավարժական գործունեության և շփման մեջ: Դրա զարգացման հոգեբանական պայմանը ուսուցչի սեփական վարքագծի և այն բարելավելու գիտակցության կարևորությունն է:

Մանկավարժական իրազեկությունը ուսուցչի կողմից սեփական գիտելիքների փոխանցման եղանակների ու հնարների տիրապետուն է ու դրանց կիրառումը դասագործընթացում սովորողի անձի զարգացման նպատակով; դրա հոգեբանական պայմանը ուսուցչի կողմից սեփական մասնագիտական որակների և մշակույթի բարձրացումն ու հաղորդակցման ճիշտ կազմակերպումը:

Հուզական ճկունությունը ուսուցչի կողմից սեփական զգացմունքներին տիրապետելու և կառավարելու ունակությունն է: Իհարկե, հուզական ճկունությունն ունի ֆիզիոլոգիական հիմք, սակայն այն ենթակա է զարգացման: Խոսքը վերաբերում է ուսուցչի հոգեվիճակաստեղծ դերին, որի նշանակությունը դասի կայացման գործում չափազանց կարևոր է; Կախված մատուցվող նյութի առանձնահատկություններից՝ ուսուցիչը դասարանում պետք է ստեղծի յուրահատուկ տրամադրող մթնոլորտ, աշակերտներին հաղորդի համապատասխան հոգեվիճակ, աշակերտի բոլոր հույզերն ու զգացմունքները ուղղի նյութի ընկալմանը, դարձնի նրանց ընկալունակ; Հուզական ճկունության բարձր մակարդակ ունեցող ուսուցիչը, աշակերտների հետ շփման ժամանակ կարողանում է ստեղծել աշակերտի մոտ հոգեբանական պաշտպանվածության և անվտանգության զգացում, ապահովում է մանկավարժական գործունեության բարձր արդյունավետություն, դրական ազդեցություն է թողնում աշակերտի անհատականության ձևավորման վրա:

Աշխարհարության ժամանակակից դաս

Աշխարհագրության ժամանակակից դասը ունի նպատակ սովորողներին ընդգրկելու դասապրոցեսին,ստեղծելու մի միջավայր որտեղ սովորողը չի կաշկանդվի և կկարողանա իր մտքերը արտահայտել, ցանկություն կունենա ակտիվ մասնակցել դասին և ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագրծական մոտեցում: Ի՞նչ է նշանակում ժամանակակից դաս. Շատ մեթոդիստներ այն հակադրում են ավանդական դասին: Դրանց մեջ կան նմանություններ.Երկուսում էլ կա նյութի հաղորդում, ամրապնդում: Սակայն կան մի շարք տարբերակիչ հատկանիշներ:

Առաջին տարբերությունը դասի նպատակի շարժառիթ որոշումն է: Դասի նպատակի և շարժառիթի որոշման պայմաններում պետք է առանձնացնել ոչ միայն գիտելիքի յուրացման և հմտություններ ձևավորման մտավոր ունակությունների զարգացման խնդիրները, այլև ստեղծագործական գործունեության փորձի և շրջակա աշխարհի վերաբերյալ հուզարժեքային վերաբերմունքի ձևավորման խնդիրը:

Երկրորդ տարբերությունը ուսուցչի դերի և գործառույթի փոփոխությունն է դասի շրջանակներում: Տվյալ դեպքում աշակերտը դիտարկվում է որպես ինքնազարգացող սուբյեկտ, իսկ ուսուցիչը հանդես է գալիս որպես ուսումնական գործունեության կազմակերպիչ: Ուսուցիչը դասի ընթացքում որոշակիացնում է դասի նպատակն ու մատնանշում թեմայի ուսումնասիրման շարժառիթը, տալիս է հանձնարարություն, խորհրդատվությամբ օգնում է յուրացնել ուսումնական աշխատանքների եղանակներն ու ձևերը:

Ժամանակակից դասում կարևոր է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, ուսումնական առաջադրանքների և խնդիրների ինքնուրույն լուծումը: Այս կապակցությամբ դասի ժամանակ առավելագույնս ավելանում է ինքնուրույն աշխատանքների մասնաբաժինը: Ավանդական դասին սովորաբար բացակայում է աշակերտների մեջ շփումը, ամանակակից դասում կիրառվում է խմբային աշխատանքի ձևեր, զույգերով աշխատանքներ, որոնք ենթադրում են շփում աշակերտների միջև՝ այսինքն մտքերի փոխանակում, գիտելիքների և կարողությունների փոխադարձ ստուգում:

Երրորդ տարբերությունը աշակերտի և ուսուցչի փոխհարաբերությունների փոփոխությունն է՝ ի տարբերություն ավանդական դասի, ուր գերկշռում են ուսուցչի ավտորիտար ոճը, ժամանակակից դասում պետք է գերակայի համագործակցության մթնոլորտը:

Աշխարհագրության դասին ներկայացվող հիմնական մանկավարժական պահանջը դասի միասնականությունն է տրամաբանական և դիդակտիկական առումներով: Առաջնահերթ պետք է հստակեցվի դասի դիդակտիկական խնդիրները, որը դասը կդարձնի ավելի հետաքրքիր և կնպաստի դասի լավ յուրացմանը: Աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: 6-8րդ դասարաններում սովորողների ակտիվացման կարևոր ուղին քարտեզի ընթերցումն է: Բարձր դասարաններում՝ լաբորատոր աշխատանքները, որը իր հերթին սովորողների մոտ զարգացնում է ստեղծագործականությունը և ինքնուրույնությունը: Աշակերտների իմացական գործունեության ակտիվացման ամենաարդյունավետ ճանապարհը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է: Այն ստեղծվում է պրոբլեմային հարցերի միջոցով, որոնք հետաքրքրություն են առաջացնում և տալիս են մտածողությանը որոշակի ուղղվածություն:

3.1 Ինքնուրույն ու նախաձեռնող սովորողի և ուսուցչի համագործակցությունը դպրոցում

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;

Ուսուցչի անձնային որակներն են՝

- սերը երեխաների նկատմամբ , համբերություն, օբյեկտիվություն, անարդարության նկատմամբ անհանդուրժողականություն;
- քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն , հարգանք երեխայի ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն;
- մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն[1]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին[2]:[3] Ստացվում է ուսուցչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի:

[1] Նույն տեղում, էջ14:

[2] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան, Գ. Թերզյան, «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում», Երևան

[3] , էջ 13:

Ուսուցման նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է :

3.2 Հարգանք անսովոր գաղափարների նկատմամբ; երեխաներին ավելի շատ անկախություն տալը

- ստեղծելով ազատ, հանգիստ ուսուցման միջավայր:

Սովորողների ստեղծագործական հաջող զարգացման համար կրթական գործընթացի հիմնական բաղադրիչը մանկավարժական աջակցությունն է, կարելի է ասել, որ մանկավարժական աջակցության գործընթացում ուսուցիչը օգնում է երեխային զգալ իր անկախությունը, պահպանել ինքնուրույնությունը: Ուսուցիչը պետք է վստահության զգացում առաջացնի յուրաքանչյուր աշակերտի մոտ: Դա անելու համար ուսուցիչը պետք է հասկանա և ճանաչի երեխայի անհրաժեշտությունն ու յուրահատկությունը, ներկայացնի նրա անհատական հոգեբանական դիմանկարը, իմանա տարիքային առանձնահատկությունները, աշակերտի վարքագիծը որոշող գերիշխող դրդապատճառները, սովորելու նկատմամբ վերաբերմունքը և մեծահասակների և հասակակիցների հետ փոխազդեցությունը: Դասընթացը պետք է համապատասխանի կրթական ծրագրի և երեխայի կյանքի այս փուլում սոցիալական և անձնական զարգացման խնդիրների միջև:

Ստեղծագործական ունակությունների զարգացման համար մեծ դեր ունի դպրոցական միջոցառումների կազմակերպումը և աշակերտների ներգրավումը: ինչպես նաև արտադպրոցական միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

Ստեղծագործական ունակությունների զարգացումից զատ շատ կարևոր է սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության ձևավորումը և զարգացումը: Առանց այդ երկու հատկանիշների մենք չենք կարող բացահայտել սովորողների մտավոր, ստեղծագործ ողջ ներուժը: Եվ որքան էլ աշակերտը օժտված լինի ստեղծագործ մտքով և երևակայությամբ, եթե նրա մոտ բացակայում է ինքնավստահությունը, ինքնուրույնությունը, ազատ մտքերի արտահայտումը, նախաձեռնողականությունը ապա իր ամբողջ ներուժը կմնա չբացահայտված: Իսկ ինչ է անհրաժեշտ ինքնավստահ և ինքնուրույն անհատ ձևավորելու համար: Առաջին հերթին միջավայր, որտեղ ինքնաբերաբար կձևավորվեն այդ հատակնիշները: Եվ այդ միջավայրի ստեղծողներն են ընտանիքը, կրթական ոլորտը՝ նախադպրոցական տարաքից սկսած: Սակայն ամենամեծ դերը ունի հենց ուսուցիչը, ով կարող է բացահայտել և զարգացնել սովորողների ողջ ներուժը, ստեղծել անհրաժեշտ ստեղծագործական ազատ մթնոլորտ:

4.**Նախագծային մեթոդը** ուսուցման միջոց է, որը 18-րդ դարում ներդրվել է Եվրոպայում ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, երբ պետք է լուծեին օրինակ, հուշարձանի նախագծման խնդիրներ: -

Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ: Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկյան ուսուցիչ Ուիլյամ Հերդ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի հոդվածի հրապարակում, որտեղ նա այդ հայեցակարգը սահմանեց որպես «սրտից կատարված ծրագիր»: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել Համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում: Ընդ որում, ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը: Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

Կրթության մեջ անհատական մոտեցումը առաջացրեց նոր մեթոդի պահանջ, որի արդյունքում առաջ եկավ նախագծային ուսուցումը որպես նոր մեթոդ:

Նախագծային աշխատանքի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝

1.Ձևավորել ակտիվ, ինքնուրույն և կրթական գործում ակտիվ մասնակցություն ունեցող սովորողներ համայնք:

2.Զարգացնել հետազոտական, ստեղծագործական, որոնողական հմտություն

3.Ձևավորել ինքնագնահատականը:

4.Ձևավորել ոչ միայն գիտելիքներ, այլ՝ այնպիսի հմտություններ, որոնք սովորողները կկարողանան կիրառել իրենց պրակտիկ գործունեության մեջ:

5.Զարգացնել սովորողի ճանաչողական հմտությունները:

6.Ապահովել կյանք-կրթություն իրական կապը:

Նախագծային մեթոդը հենց կրթական մեթոդների ամբողջությունն է, որոնք հնարավորություն են տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու կամար: Արդյունքը՝ տեսանելի, ներկայանալի, հրապարակված աշխատանքն է: Նախագծային աշխատանքը պետք է ունենա սկզբունքներ, որոնք կկոնկրետացնեն հետագա աշխատանքը:

Այդ սկզբունքներից են՝

1.գրավիչ հետաքրքիր լինելը սովորողի համար,

2.սովորողի պետք է տեսնի որ կարող է դառնալ բացահայտող,

3.պետք է մղեն որոնելու, գտնելու, համեմատելու, հակադրելու, զուգահեռներ անցկացնելու,

4. դրդեն մտածելու, ստեղծելու, գտնելու, նորը բացահայտելու:

Այսպիսով նախագծային աշխատանք կրթական այն գործիքն է, որը գիտելիքը դարձնում է փորձ, հմտություն: Եվ որքան հաճախ և արդյուավետ կիրառեք այնքան հաջողված կրթական ոլորտ կձևավորենք:

օրինակ

Նախագծային աշխատանք փորձնական իրականացրել եմ աշխարհագրություն առարկայից 9-րդ դասարանում: Թեման ՀՀ մարզերը: Աշակերտները պատրաստել էին ՀՀ մարզերի 2 մակետներ,որոնց վրա պարզ երևում էին մարզերը և յուրաքանչյուր մարզի վրա նշված էին տեղեկություններ որոնց մասին մանրամասն ներկայացվեցին բանավոր:

Հետո յուրաքանրյուր դասին աշակերտները ներկայացրեցին ՀՀ մարզերը առանձին-առանձին որին կից պատրաստել էին 10 մարզերի մակետները և Երևան առանձին:

Արդյունքում ստացանք ՀՀ մարզերի խճանկարը որը շատ գեղեցիկ էր և տպավորիչ

Այս աշխատանքի ժամանա աշակերտները կատարեցին և՛ ինքնուրույն աշխատանք, և՛ ստեղծագործական աշխատանք, և՛ հետազոտական աշխատաք և իհարկե ցուցաբերեցին գեղագիտական ճաշակ:

Եզրակացություն

Ինչպես կրթության ոլորտում այնպես էլ ցանկացած բնագավառում ստեղծագործականությունը դարձնում է այն հետաքրքիր, հաղորդում է գույներ: Հատկապես կրթության ոլորտում շատ մեծ է ստեղծագործական մտքի գործունեության դերը: եվ օր առաջ պետք է ներդրվեն բոլոր հնարավոր միջոցները այդ բարդ գործընթացը կյանքի կոչելու համար: Հատկապես նորարարությունների, ժամանակակից տեխնիկական հնարավորությունների, դասի նոր մեթոդների ներդրումը կրթության ոլորտում: Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը պետք է սկսվի դպրոցից բայց նաև շատ մեծ է ծնողի դերը, ով իր աջակցությամբ ևս կարող է օգնել այդ բարդ գործում: Սակայն առանց պետական աջակցության շատ ավելի դժվար կիրականացվի այս բարդ գործընթացը:

Դասի ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի բոլոր սովորողների պահանջմունքներն առանձին-առանձին: Քարտային կամ անհատական առաջադրանքները կարող են կազմվել մի քանի բովանդակային մակարդակներով, որպեսզի բավարարեն հետ մնացող սովորողներին ևս, եթե կան այդպիսիք: Ինչու չէ կարևոր է նաև բարոյահոգեբանական միջավայրը. յուրաքանչյուր սովորող պետք է դասի ընթացքում իրեն կարևոր զգա:

Անշուշտ, մեր թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք ակտիվ մեթոդներ, որոնք կարող են ոգևորել սովորողին ու պահել ակտիվ դաշտում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
2. http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4).pdf Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
3. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան, Գ. Թերզյան, «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում», Երևան 2013:
4. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ,Երևան, 2020:
5. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/gittex/2018(1-2).pdf ՀՊՄՀ, Գիտական տեղեկագիր, Երևան, 2018: